0052900025

Reçu CLT / CIH / ITH

Le 18 AVR. 2011

N° 4859

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակին,
«Հայ աշուղների միավորում» հասարակական
կազմակերպության անդամ աշուղներից

Հայ աշուղներս մեր գոհունակությունն ենք հայտնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և աջակցությամբ իրականացվող «Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը» խորագրով ծրագրի կապակցությամբ:

Համոզված ենք, որ վերոնշյալ ծրագրի իրականացումը կապահովի հայ աշուղական արվեստում իր ուրույն տեղն ունեցող սիրավեպի ժանրի կենսունակությունը՝ մեծապես նպաստելով նրա կատարողական ավանդույթի պահպանմանն ու զարգացմանը:

Լիահույս ենք, որ նորօրյա հայ աշուղներիս համար այն կլինի մշակութային իրադարձություն. կվերարժևորի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստը և խթան կհանդիսանա աշուղական երգաստեղծության ոլորտում:

Աշուղ Անդրանիկ Ուջանցի
Աշուղ Լեյլի
Աշուղ Օնիկ
Աշուղ Հեզիկ
Աշուղ Երազ
Աշուղ Պարգև Թիֆլիսեցի
Աշուղ Ռազմար Սասունցի
Աշուղ Հովեր
Աշուղ Երամ
Աշուղ Աստղանուշ

02.02.2011թ.

Երևան

*Unofficial translation*

**"Union of the Armenian Ashooghs" NGO**

We, the Armenian ashooghs, herewith write to conjoin our voices with those who have recently launched the notable initiative to submit nomination of "Ashoogh Love Romance" for possible inscription on the List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding in 2011.

We are convinced that the realization of this initiative will ensure the viability of the Love Romance genre – an unalienable part of the ashoogh art, thus significantly contributing to the preservation and safeguarding of its performing traditions.

We are hopeful that its inclusion would yield tangible efforts aimed at the development of the folk-professional art and ensuring its transmission to the next generations.

*Members of the Union*
*Ashoogh Andranik Ujanci*
*Ashoogh Leili*
*Ashoogh Onik*
*Ashoogh Hezik*
*Ashoogh Eraz*
*Ashoogh Pargev Tiflisetsi*
*Ashoogh Razmar Sasountsi*
*Ashoogh Hover*
*Ashoogh Eram*
*Ashoogh Astghanush*

*02.02.2011*
*Yerevan*

«ԱՐՄԻ»
ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՋԱԿԻՑ
Հասարակական կազմակերպություն

"АРМИ"
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ ПО СОДЕЙСТВИЮ ПРОФ. МУЗЫКИ

"ARMI"
SUPPORTER OF PROFESSIONAL MUSIC
Non governmental organization


N_______________ «____»____________200

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

<<ԱՐՄԻ>> պրոֆեսիոնալ երաժշտության աջակից կազմակերպությունը, որը ավանդական արվեստին նվիրված հատուկ կուրսեր է վարում և երիտասարդ կադրեր պատրաստում Հայաստանի տարբեր շրջաններում, խրախուսում և իր գոհունակությունն է հայտնում <<Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը>> խորագիրը կրող ծրագրի կապակցությամբ:

Տեղում ծանոթանալով ավանդական մշակույթին, մեր մասնագետները ահազանգում են, որ չնայած աշուղական երգարվեստը, հատկապես նրա ամբաժան մաս՝ սիրավեպը, հանդիսանում է բավականին կենսավարող բնագավառ, բայց և հիմա, և մոտակա ապագայում կարիք ունի լուրջ մասնագիտական ուշադրության: Հատկապես ավագ սերնդի որոշ ներկայացուցիչներ կրողն են մեծ և արժեքավոր նյութի և համապատասխան աջակցության պայմաններում հնարավոր է հավաքագրել, ապահովել պահպանումն ու շարունակելիության սկզբունքը երիտասարդների շրջանում, ավելին՝ գիտական ուսումնասիրություններով ապացուցել աշուղական սիրավեպի ազգային առանձնահատկությունը մի տարածաշրջանում, որտեղ միջմշակութային շփումները ունեն պատմական հիմք:

Մենք ողջունում ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և անմիջական աջակցությամբ իրականացվող այսօրինակ ծրագրի գաղափարը և հույս ունենք, որ <<Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը>> հայտը իր արժանի տեղը կզրավի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ մշակութային արժեքների ցանկում:

Նախագահ՝ Ք. Տեր-Սիմոնյան


375002, ք. Երևան, Դեմիրճյան 40շ., բն. 74
e-mail: armi@inbox.ru
Tel.: (091)21-54-42,
091 (093) 42 86 49.

**"ARMI" Supporter of Professional Music NGO**

"ARMI" Supporter of Professional Music NGO, which conducts special courses on traditional art and prepares young professionals in the regions of Armenia, emphasizes the importance and urgency of taking necessary actions to preserve and safeguard this art from becoming irrelevant.

Investigating the state of the traditional culture on the ground, our experts raise an alarm that ashoogh art, especially its inseparable part – love romance - is being threatened by decrease in the number of bearers of the tradition which historically has been transmitted from the older generation to the younger. There is an urgent need to exert tangible efforts aimed at compiling, preservation and ensuring continuation of this tradition in the young generation, at the same time through scientific investigations reveal its national peculiar characteristics.

We extend our strong support to the nomination of Ashoogh Love Romance for inscription on the UNESCO List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding in 2011 and express our hope that its inclusion would promote its international value, consequently, its preservation and safeguarding in Armenia.

*Q. Ter-Simonyan*
*Chairman*

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԹԱԹՈՒԼ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԵՐԳԻ ՊԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹ ՊՈԱԿ

РА МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
ГОСУДАРСТВЕННЫЙ АНСАМБЛЬ
ПЕСНИ И ТАНЦА ИМ. Т.АЛТУНЯНА

MINISTRY OF CULTURE
ARMENIAN STATE ENSAMBLE
OF DANCE AND SONG AFTER T.ALTUNYAN

« ______ » ______________ , 20 ____

ՅՈՒՆԵՍԿՈ-ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Հայաստանի Երգի Պարի Պետական համույթի տնօրինությունը խրախուսում, քաջալերում և իր գոհունակությունն է հայտնում <<Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը>> խորագիրը կրող ծրագրի առիթով:

Աշուղական երաժշտությունը, մասնավորեն սիրավեպը, որպես ժողովրդի երաժշտական առօրյայի անբաժանելի մաս, մեր համերգային ծրագրերի կարևոր մասն է կազմում և, մեր կողմից ընկալվում է, որպես ազգային ինքնագիտակցության կարևոր դրսևորումներից մեկը:

Ժողորդապրոֆեսիոնալ երաժշտության այս ճյուղը այսօր էլ սնում է նաև հայ դասական երաժշտարվեստը:

Սակայն այս ճյուղի կատարողական ավանդույթի պահպանման, շարունակական զարգացման, երիտասարդ մասնագետների պատրաստման ու կատարելագործման անխափան գործընթացը կարիք ունի մասնագետների լուրջ ուշադրության ու աջակցության:

Մենք ողջունում ենք ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանավորությամբ իրականացվող այսօրինակ ծրագրի գաղափարը: Հույս ունենք, որ <<Աշուղական սիրավեպի հայկական ավաղույթը>> հայտը իր արժանի տեղը կգրավի ՅՈՒՆԵՍԿՈ-ի ոչ մշակութային արժեքների ցանկում:

Տնօրեն՝ Ա. Տիգրանյան

ՀՀ Երևան,Սայաթ-Նովա 15, Հեռ. (+37491) 468827, (+37410) 589474, Էլ.փոստ՝ info@tatulens.am
РА, г.Ереван, Саят-Нова 15, Тел: (+37491) 468827, (+37410) 589474, Э-почта info@tatulens.am
RA, Yerevan, Sayat - Nova 15, Tel: (+37491) 468827, (+37410) 589474, E-mail info@tatulens.am

**Ministry of Culture**
**Armenian State Ensemble of Dance and Song after T. Altunyan**

Armenian State Ensemble of Dance and Song after T. Altunyan welcomes and pledges its strong support to the efforts of inscribing "Ashoogh Love Romance" on the List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding.

Ashoogh music, especially love romance, has been an inalienable part of the Armenian national cultural values throughout centuries and has created the sense of self identity and continuity for the Armenian people.

However, the performance traditions of this art need preservation, sustainable development, preparation of professionals and improvement of their skills.

It is for these reasons that we communicate our earnest desire to see the "Ashoogh Love Romance" in the framework of the UNESCO safeguarding measures, which would yield greater international recognition of this intangible cultural heritage as well as financial support to its preservation.

*A. Tigranyan*
*Director*

**“Children and Youth Center of Culture and Arts” SNCO**

The pedagogical council of the Children and Youth Center of Culture and Arts welcomes and communicates its unequivocal support to the nomination of Ashoogh Love Romance for the UNESCO List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding in 2011.

The ashoogh art is one of the ancient domains of the Armenian music and it is of paramount importance to ensure its viability. It is of great value that the coming generations be aware of their national traditions and unique cultural heritage. It is for these reasons that the Center has its ashoogh song groups.

We unequivocally recognize the outmost importance of preservation and safeguarding of the ashoogh art as inseparable part of the Armenian intangible heritage, and therefore pledge our strong support for its inclusion in the UNESCO List.

*S. Baloyan*
*Director*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Պետական ոչ առևտրային կազմակերպություն

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE RA
CHILDREN AND YOUTH CENTER OF CULTURE AND ARTS
SNCO

РА МИН. ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
ДЕТСКО-ЮНОШ. ЦЕНТР. ХУД. ВОСП. И КУЛЬТУРЫ
ГНКО

Երևան, Ագաթանգեղոս
0010 Erevan, Agatangeghos

Tel.52-09-63,
Fax.(37410)523861
E-mail-arminex@yahoo.com

3

N 239 « 1 » 02 2010թ.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակ

ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնի մանկավարժական խորհուրդը ողջունում և իր զոհունակությունն է հայտնում «Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը» խորագիրը կրող ծրագրի կապակցությամբ:

Աշուղական արվեստը հայ երաժշտության հնագույն ճյուղերից է և անհրաժեշտ է պահպանել դրա կենսունակությունը: Այդ իսկ պատճառով Կենտրոնում գործում են աշուղական երգի խմբակներ, որի գործունեությունը մեծ նշանակություն ունի մատաղ սերնդի դաստիարակության գործում:

Համոզված ենք, որ այս ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի աշուղական երգարվեստի ավանդույթների պահպանմանը և զարգացմանը:

Մենք ուրախ ենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և անմիջական աջակցությամբ իրականացվում է այսօրինակ ծրագրի գաղափարը և վստահեցնում ենք, որ կենտրոնի մանկավարժները և աշուղական երգի խմբակների սաները նույնպես կմասնակցեն տվյալ ծրագրի իրականացմանը:

Կենտրոնի տնօրեն Ս.Բալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ**
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, Ագաթանգեղոսի 3
Հեռ. 52-09-63

REPUBLIC OF ARMENIA
CULTURAL UNION
**«SAYAT-NOVA**

YEREVAN, 3 Agatangeghos str.
Tel.: 52-09-63

02.02.2011թ.

**ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակին**

«Սայաթ-Նովա» մշակութային միությունը ողջունում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և աջակցությամբ իրականացվող «Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը» խորագիրը կրող ծրագիրը:

Տեղեկացնում ենք, որ մեր միությունում պահպանվում են դասական սիրավեպերին վերաբերող արժեքավոր նյութեր, ինչպես նաև ստեղծվում՝ նոր սիրավեպեր՝ միության անդամ հայ աշուղների կողմից:

Մեր պատրաստակամությունն ենք հայտնում՝ մասնակցելու և հնարավորինս աջակցելու վերոնշյալ ծրագրի իրականացմանը՝ համոզված, որ այն ոչ միայն կապահովի աշուղական արվեստի, մասնավորապես, սիրավեպի ժանրի շարունակական զարգացումը, այլև կնպաստի ժողովուրդների մշակութային համագործակցությանն ու բարեկամության ամրապնդմանը:

Հարգանքով՝

Նախագահ՝

ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր
ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ

**“Sayat Nova” Cultural Union**

On behalf of our organization, we wish to welcome and express our appreciation for the motion to propose inscription of “Ashoogh Love Romance” on the UNESCO List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding in 2011.

Our Union is a repository of valuable materials pertaining to the classical love romances and a premise where new pieces are being created by our ashoogh members.

We are convinced that the inclusion of this category of ashoogh art in the List would ensure its continuous development and promote mutual respect between communities and intercultural dialogue.

*Tovmas Poghosyan*
*Director*
*Honored Art Worker, Professor*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՋԻՎԱՆՈՒ
ԱՆՎԱՆ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ, Ագաթանգեղոսի 3
Հեռ. 52-09-63

REPUBLIC OF ARMENIA
CULTURAL UNION
«SAYAT-NOVA
JIVANI
ASHUGH SCHOOL

YEREVAN, 3 Agatangeghos str.
Tel.: 52-09-63

02.02.2011թ.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակին

Ջիվանու անվան աշուղական դպրոցն արժևորում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և աջակցությամբ իրականացվող «Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը» խորագիրը կրող ծրագիրը:

Սիրավեպերը հատուկ դասընթացներով ուսուցանվում են մեր դպրոցի համապատասխան մասնագետների և կատարվում՝ սաների կողմից:

Համոզված ենք, որ վերոնշյալ ծրագրի իրագործումն աննախադեպ դրական ազդեցություն կունենա աշուղական սիրավեպի կատարողական ավանդույթի պահպանման ու զարգացման վրա, ինչպես նաև կնպաստի մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործին:

Վստահեցնում ենք, որ այս ծրագիրն սպասված է, իսկ մենք՝ պատրաստակամ՝ հնարավորինս աջակցելու նրա իրագործմանը:

Հարգանքով՝

Տնօրեն՝

ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր
ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ

**“Sayat Nova” Cultural Union**
**“Jivani” Ashoogh school**

It is with deepest sense of contentment that we learnt about the motion proposing inscription of “Ashoogh Love Romance” on the UNESCO List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding in 2011.

Love romances are included in the curriculum of our school as special courses and are performed by our students. It is of great importance for the preservation of the ashoogh art that such typical expressions as ashoogh love romance be promoted. For this, there is an urgent need of safeguarding the knowledge of this national tradition and transmitting it to the next generation.

In this vein, we pledge our full support for the inclusion of this heritage in the List and our strong commitment to the implementation of further safeguarding measures.

*Tovmas Poghosyan*
*Director*
*Honored Art Worker, Professor*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ

Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

UNION OF COMPOSERS AND MUSICOLOGIST'S OF ARMENIA

СОЮЗ КОМПОЗИТОРОВ И МУЗЫКОВЕДОВ АРМЕНИИ

Tel.+37410/524292 fax.525337 robamir@armenia.com 375019 Yerevan demirchyan 25


ՀԿԵՄ-02/03

09.02.2011թ.

Յունեսկո-ի կենտրոնական գրասենյակ

Աշուղական արվեստի ավանդույթը այն բաղկացուցիչ մասն է, որը այսօր էլ սնում է հայ դասական երաժշտարվեստը: Ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության հարուստ այս տեսակի կարևորագույն ճյուղն է հայ աշուղական սիրավեպը, որ հասել է մեզ խորը միջնադարից և այսօր էլ կենդանի ապացույցն է տարածաշրջանին բնորոշ միջմշակութային մշտական երկխոսության:

Աշուղական սիրավեպը մեզանում հանդիսանում է բավականին կենսավարող բնագավառ, սակայն շարունակական զարգացման, մասնագետների պատրաստման ու կատարելագործման, գիտական ուսումնասիրության ասպարեզներում կարիք ունի լուրջ ուշադրության:

Հայաստանի Հանրապետության Կոմպոզիտորների միությունը ողջունում է և լիահույս է, որ «Հայ աշուղական սիրավեպի» հայտը իր արժանի տեղը կգրավի Յունեսկո-ի ոչ նյութական մշակութային արժեքների ցանկում:

**ՌՈԲԵՐՏ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**

Միության նախագահ

ՀՀ Ժողովրդական արտիստ

Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանակիր

Պրոֆեսոր, կոմպոզիտոր

**Union of Composers and Musicologists of Armenia**

The Ashoogh art tradition is one of the elements that nowadays as well feed the classical music art. Ashoogh Love Romance is among the most significant branches of this genre of the folk-professional art, the origin of which goes down to the medieval times and which today represents a lively example of the intercultural dialogue in this region.

Ashoogh Love Romance is quite a viable domain, however, there is an urgent need of its sustainable development, preparation of experts, professional improvement and scientific research.

Union of Composers and Musicologists of Armenia expresses its whole hearted support to the nomination of Ashoogh Love Romance for the UNESCO List of Intangible Cultural Heritage in Need of Urgent Safeguarding and believes that its inclusion will not only help preserve this unique art and develop Armenian cultural identity but also ensure the protection of one the most valuable examples of human intangible cultural values.

*Robert Amirkhanian*
*Chairman*
*People's Artist of the Republic of Armenia*
*Bearer of the order of St. Mesrop Mashtots*

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ
*Государственная Некоммерческая Организация*

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS
*NON-Commercial State Organization*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
*Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն*

N 2478-01/30 "10" 05 2010թ.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԿՅԱԿ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրինությունը հայտնում է իր գոհունակությունը «Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը» խորագիրը կրող ծրագրի առիթով: Աշուղական սիրավեպը խոր արմատներ ունի Հայաստանում, այն ժողովրդի երաժշտական առօրյայի անբաժանելի մասն է եղել և մեր օրերում իր ուրույն տեղն է գրավում մեր մշակույթում: Համոզված ենք, որ սույն ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի աշուղական սիրավեպի կատարողական ավանդույթի պահպանմանը, ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության այս ճյուղի շարունակական զարգացմանը և երիտասարդ մասնագետների պատրաստմանն ու կատարելագործմանը: Մեր ինստիտուտում արժեքավոր նյութեր են պահպանվում և ինստիտուտի համապատասխան մասնագետները նույնպես զբաղվում են աշուղական երգարվեստի գիտական ուսումնասիրության խնդիրներով: Մենք ուրախ ենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և անմիջական աջակցությամբ այսօրինակ ծրագիր է իրականացվելու: Արվեստի ինստիտուտը հնարավորինս կաջակցի տվյալ պրոյեկտի իրագործմանը:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Ա. ԱՂԱՍՅԱՆ

375019 Երևան
Մարշալ Բաղրամյան 24գ
Հեռ.58-37-02
Էլ.փոստ՝ instart@sci.am

375019 Ереван
Маршала Баграмяна 24г
Тел.58-37-02
Эл.почта: instart@sci.am

375019 Yerevan
Marshal Baghramyan 24g
Tel.58-37-02
E-mail: instart@sci.am

UNESCO Head Office

The management of the Institute of Art of Armenian Academy of Sciences strongly supports the project entitled "The Armenian Tradition of Ashoogh Love Romance." The ashoogh love romance has deep roots in Armenia, it has been the inseparable part of nations daily musical life and currently plays an important role in our culture. We are sure that the conduction of this project will influence and promote preservation of the performing tradition of ashoogh love romance, the further development of this branch of folk-professional music as well as preparation and advancement of young generation of professionals in the field. Our institute reserves a big number of valuable materials on ashoogh love romance and the specialists in the field are involved in a thorough research of scientific problems of ashoogh song art . We are glad that this type of project will be conducted with support of UNESCO. The Institute of Art will support the present project in all possible ways.

Director of the Institute of Art

Dr. Prof. A. Aghasyan

/A. SAMUELYAN/

Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն
ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ (ՊՈԱԿ)
Министерство образования и науки Республики Армения
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ им. КОМИТАСА (ГНКО)
Ministry of higher education and science of Republic of Armenia
YEREVAN KOMITAS STATE CONSERVATORY (NCO)

«_____» __________ 2010թ.

No. ______________________

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական կոմիտե

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը խրախուսում, քաջալերում և իր գոհունակությունն է հայտնում «Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը» խորագիրը կրող ծրագրի կապակցությամբ: Աշուղական արվեստը հայ երաժշտության հնագույն և զարգացած ճյուղերից մեկն է և անհրաժեշտ է ապահովել դրա կենսունակությունը:

Մեր ամբիոնի առաջատար մասնագետները հատուկ կուրսեր են վարում և երիտասարդ կադրեր պատրաստում այս ասպարեզում: Համոզված ենք, որ սույն ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի աշուղական երգարվեստի, մասնավորապես, սիրավեպի ժանրի կատարողական ավանդույթի պահպանմանը և զարգացմանը:

Մենք ողջունում ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ և անմիջական աջակցությամբ իրականացվող այսօրինակ ծրագրի գաղափարը և վստահեցնում ենք, որ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը հնարավորինս կաջակցի տվյալ ծրագրի իրագործմանը:

Ռեկտոր պրոֆ. Ս. Սարաջյան

Երաժշտական ֆոլկլորագիտության
ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու պրոֆ. Ա. Փահլևանյան

0001, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Սայաթ-Նովայի 1ա • 0001, Республика Армения, Ереван, ул. Саят-Нова 1а
1a, Sayat-Nova Str., Yerevan 0001, Republic of Armenia ☎ (+374 10) 58 11 64; Fax (+374 10) 56 35 40; E-mail: yksc@conservatory.am

UNESCO Head Office

The Department of Musical Folklore of Yerevan Komitas State Conservatory recommends, supports and expresses its satisfaction about the project entitled "The Armenian Tradition of Ashoogh Love Romance." The ashoogh art is one of the oldest and highly developed branches of Armenian music and it is necessary to secure its continuity.

The professionals of Department conduct special courses and prepare new generation of professionals in the field. We are sure that the conduction of the current project will promote the ashoogh song art, especially the performing tradition of love romance genre's continuity and further development.

We greet the idea of conduction of this type of project with support and sponsorship of UNESCO and assure that the Department of Musical Folklore will support the present project in all possible ways.

Rector of Yerevan Komitas State Conservatory

S. Sarajev

Department of Musical Folklore, Chair

Prof. A. Pahlevanyan

/A. SAMVELYAN/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԴԻԼԻՋԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
«ДИЛИЖАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
КОЛЛЕДЖ ИСКУССТВ»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
DILIJAN STATE ART COLLAGE
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

*3903, ք.Դիլիջան, Կալինինի 57, հեռ./ֆաքս (+374) 0268 2-74-86*

*3903, г.Дилижан, ул.Калинина 57, тел./факс(+374) 0268 2-74-86*

*E-mail: pianoart@mail.am*

ՅՈՒՆԵՍԿՈ-ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Դիլիջանի արվեստի պետական Քոլեջը իր գոհունակությունն է հայտնում <<Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը>> խորագիրը կրող ծրագրի կապակցությամբ: Տավուշի շրջանի երաժշտական կրթության կարևոր կենտրոններից մեկն է մեր Արվեստի կենտրոնը, որի կրթական սկզբունքներից է ազգային երաժշտարվեստի պահպանումն ու զարգացումը, նրա կենսունակության ապահովումը երիտասարդ մասնագետների շրջանում:

Աշուղական սիրավեպը այսօր էլ մեր ժողովրդի առօրյայի անբաժան մասն է, սակայն արագ զարգացող իրականության մեջ այս ժանրի կատարողական ավանդույթը կարիք է զգում շարունակական զարգացման ու կատարելագործման:

Համոզված ենք, որ այս ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի հայ աշուղական երգարվեստի, մասնավորապես սիրավեպի ժանրի պահպանմանը, նաև տարածաշրջանին բնորոշ միջմշակութային մշտական երկխոսության հաստատուն զարգացմանը:

Մենք ողջունում ենք և լիահույս ենք, որ <<Աշուղական սիրավեպի հայկական ավանդույթը>> հայտը իր տեղը կգրավի ՅՈՒՆԵՍԿՈ-ի ոչ նյութական մշակութային արժեքների ցանկում:

Խորհրդի նախագահ Պրոֆ. Գ. Ոսկանյան

Տնօրեն Յ. Մկրտումյան

**Dilijan State Art College SNCO of**
**Ministry of Education and Science**

Our college is one of the important centers of musical education in Tavush region of Armenia. Its educational principles are based on the concept of preservation and promotion of the national music traditions, as well as ensuring their viability in the young generation.

The ashoogh love romance is nowadays as well an unalienable part of the daily life of our people, however, in the fast developing reality, the performance traditions of this genre need continuous development and improvement.

We are hopeful that this nomination would raise greater international awareness about this art, contribute to its preservation, as well as promote mutual understanding between peoples sharing this heritage and intercultural dialogue in our region.

*G. Voskanian*
*Chairman of the Council*

*Y. Mkrtumian*
*Director*